ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 25.08.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/38

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.08.2017թ. թիվ 03/26-3/14668-17 գրությամբ «ԷԼՄԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի 09.08.2017թ. թիվ 02/16.4/5034-17 գրության հիման վրա, 11.08.2017թ. թիվ 03/26-3/14668-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «ԷԼՄԱ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>«ԷԼՄԱ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, կարծիք ստանալու նպատակով, 11.08.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/1472617 գրությամբ դիմել է «ԷԼՄԱ» ՍՊԸ-ին:

Խորհրդի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ Ընկերության կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 18.08.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 26.07.2017թ. թիվ 02/27.1/4742-17 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից ՀՀ ԿԱ ոստիկանության կարիքների համար ՀՀ ԿԱ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՊՊԾ գնդի և ոստիկանության զորքերի (նույն տարածքում) մասնաշենքի վերանորոգման-հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով 19.06.2017թ. կազմակերպված «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած և առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ԷԼՄԱ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերում առկա անհամապատասխանությունների շտկումները (մասնակցի ներկայացրած որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում հավելված 5-ը և հավելված 5.2-ը հաստատված չեն եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ):

Պատվիրատուն 09.08.2017թ. թիվ 02/16.4/5034-17 գրությամբ ներկայացրել է «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 18.08.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը, ինչպես նաև հայտնել, որ «ԷԼՄԱ» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 21.07.2017թ. գրությամբ հրաժարվել է «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/5» ծածկագրով ընթացակարգի հետագա մասնակցությունից:

4. ՍՑ-ԱՄ-2017/38 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/38 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԿԱ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ ԿԱ ոստիկանության կարիքների համար՝ ՀՀ ԿԱ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՊՊԾ գնդի և ոստիկանության զորքերի (նույն տարածքում) մասնաշենքերի վերանորոգման-հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ԷԼՄԱ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.06.2017թ. ժամը 16:30-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ԷԼՄԱ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է՝ ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.07.2017թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2-2 արձանագրության 2-րդ կետի 2.1-րդ ենթակետով արձանագրվել է, որ «ԷԼՄԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 5-ը և Հավելված 5.2-ը հաստատված չեն

էլեկտրոնային թվային ստորագրությամբ (որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա):

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետը և 47-րդ կետը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ծանուցել է Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում նշված անհամապատասխանություններ շտկելու վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.07.2017թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 2-3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ԷԼՄԱ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները:

5. «ԷԼՄԱ» ՍՊԸ-ն ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեին ուղղված 21.07.2017թ. գրությամբ հայտնել է, որ հրաժարվում է ՀՀ ԿԱ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՊՊԾ գնդի և ոստիկանության զորքերի (նույն տարածքում) մասնաշենքի վերանորոգման-հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.08.2017թ. թիվ 03/26-3/14668-17 գրությունը, ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի 26.07.2017թ. թիվ 02/27.1/4742-17 և 09.08.2017թ. թիվ 02/16.4/5034-17 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի,

գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե '

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: ***Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:***

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին

համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետը սահմանում է, որ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:»

Կարգի 47-րդ և 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝

47. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի

պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

48. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8-րդ կետի 8.19 ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

ՀՀ ԿԱ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ ԿԱ ոստիկանության կարիքների համար՝ ՀՀ ԿԱ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՊՊԾ գնդի և ոստիկանության զորքերի (նույն տարածքում) մասնաշենքերի վերանորոգման-հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով «ԷԼՄԱ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

Ընկերությունը Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով հայտնել և հավաստել է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.06.2017թ. ժամը 16:30-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ԷԼՄԱ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է սահմանված կարգով որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, սակայն հայտի Հավելված թիվ 5-ը՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման մասին դիմումը և Հավելված թիվ 5.2-ը՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանքը, ներկայացվել են «ԷԼՄԱ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից ոչ էլեկտրոնային եղանակով ստորագրված և կնքված (բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված)) տարբերակով, մինչդեռ Ընթացակարգի Հավելված թիվ 5-ով և Հավելված թիվ 5.2-ով սահմանվել է, որ նշված հավելվածները չեն կնքվում, եթե դրանք հաստատվում են թվային ստորագրությամբ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն, արձանագրելով Ընկերության կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա վերը նշված անհամապատասխանությունը, ծանուցել է Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում նշված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, որը սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.07.2017թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 2-3 արձանագրության համաձայն, չի շտկվել և որի հիման վրա Ընկերության հայտը մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Այսիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «ԷԼՄԱ» ՍՊԸ-ի կողմից «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/5» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տրվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, որի հետևանքով Ընկերության հետագա մասնակցությունը նշված ընթացակարգին դադարեցվել է:

Միևնույն ժամանակ Խորհուրդն արձանագրում է նաև, որ «ԷԼՄԱ» ՍՊԸ-ն 21.07.2017թ. գրությամբ հրաժարվել է «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/5» ծածկագրով ընթացակարգի հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.08.2017թ. թիվ 03/26-3/14668-17 գրությամբ «ԷԼՄԱ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 03315299) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել և «ԷԼՄԱ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**